

Ս. Գ. Մվյառն

ՍՏԵՓԱՆ ԲԱՍՏԱՄՅԱՆԸ «ՎԱԳՐԵՆԱՎՈՐԻ» ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ

(Թարգմանության 100-ամյակի առթիվ)

Հանճարեղ Շոթա Ռուսթավելու հուշակավոր «Վագրենավորը» գրքերի ընթացքում մեծ սեր է ժողովրդականություն է վայելել ոչ միայն վրացական շրջաններում և վրաց ընթերցողների կողմից, այլև բոլոր նրանց, ովքեր ծանոթացել են անմահ պոեմին:

«Վագրենավորը» դեռ հնուց մեծ տարածում ուներ հայկական շրջաններում: Շատ հայ գործիչներ լավ գիտենալով վրացերեն, ոչ միայն կարդում և սիրում էին «Վագրենավորը», այլև արտագրում էին այդ մեծածավալ պոեմը և երբեմն էլ որպես օժիտ տալիս իրենց ամուսնացող աղջիկներին, ինչպես այդ անում էին վրացիները¹: Այդ կապակցությամբ վրացական ֆոլկլորում տարածված էր ասել.

Նա ունեի մի բարեկիրթ,
Շքեղազարդ սիրուն աղջիկ,
Ամուսնացրի օժիտ տվի
«Վագրենավորն» իմ գեղեցիկ²:

Սակայն ներկա դեպքում մեզ հետաքրքրողը «Վագրենավորի» հայերեն առաջին թարգմանությունն է, որ առաջին անգամ հայ մամուլում երևացել է անցյալ դարի 60-ական թվականներին, թեև պոեմը գրվել է 12-րդ դարում և առաջին անգամ վրացերեն հրատարակվել դեռևս 1712 թ.:

19-րդ դարում, երբ հայ գրականությունն ու լեզուն, հայ մշակույթը աննախընթաց զարգացում էին ապրում, հայ ընթերցողների համար, անշուշտ, բաղձալի դարձավ իրենց մայրենի լեզվով կարդալ եղբայրական ժողովուրդների լավագույն երկերը և դրանց թվում «Վագրենավորը»:

Նվազ, 1860 թ. երևան եկան այդ պոեմի հայերեն բավական ընդարձակ հատվածները, հայտնի հասարակական գործիչ, գրականագետ և բժշկապետ Մտեփան Բաստամյանի թարգմանությամբ: Նա «Սարգիս» ծածկանունով իր թարգմանությունը գետեղեց Մարկոս Աղաբեկյանի (1830—1908) և Համբարձում էնֆիաճյանի (1824—1896) «Կոունկ հայոց աշխարհին» ամսագրի 1860

1 Պրոֆ. Լ. Մևիսեթ-Բեկն ունի վրացերեն հետաքրքիր աշխատություն՝ «Վագրենավորի» հայերեն տարբերակների մասին (ձեռագր. Լեոն Բելիշևտ-Բեյի «Տոմեյի Յադամբուրնի Վեջեյի լեզուսանիս» (Յեմիշեյ) - «Լեզուսանիսի մեջկցվածություն»):

2 Թարգմ. Գ. Սևակի, տե՛ս Շոթա Ռուսթավելի և նրա «Վագրենավորը» (կազմեցին և խմբագրեցին՝ Դ. Սևակ և Մ. Դուրգարյան), Պետհրատ, Երևան, 1933, էջ 6:

և 1862 թթ. մի շարք համարներում՝ «Ընծու մորթի հագած մարթր» վերնագրով³:

Դա «Վագրենավորի» առաջին հայերեն թարգմանությունն էր, որը թեև Թիֆլիսի բարբառով էր կատարված, սակայն, մոտ էր բնագրին, հնչում էր ճոխ, բանաստեղծական հանգերով, հարուստ երաժշտականությամբ և հարազատությամբ:

Ս. Բաստամյանն այդ թարգմանությամբ երևան բերեց ոչ միայն վրացերենին լավ տիրապետելու իր ունակությունը, այլև բանաստեղծական որոշակի ձիրք ու կարողություն:

Իհարկե մինչ այդ, Բաստամյանն ուներ մի շարք ինքնուրույն բանաստեղծություններ և առակներ, որոնք տպադրվել էին «Կովկաս» օրաթերթում և այլ պարբերականներում:

Բժշկապետ Ստեփան Բաստամյանը «Վագրենավորի» իր այդ թարգմանությունն ուղարկելով «Կոունկի» խմբագրությանը, նրան ևցեց մի նամակ, ուր ի միջի այլոց ասում է.

«Էս թղթի հետ կու բերեն մե կտոր բան, որը որ թարգմանած է վրացերենից: Գիրը, որտեղից վեր է առած էս կտոր բանը, ասվում էր „ვეფხისტყაოსანი“, այսինքն «Մարթ րնծու մորթի հագած»: Սրա դրողն է Շոթա Ռուսթավելը: Էս մարթը էնքան հարգևոր է էլի վրացիներու մեջը, որ վեց հարյուր տարի է սրա շինած բանը էստեղ կարգվում է, ինչպես Հոմերոսի շինածները կարգվում են ուրիշ աղգերի մեջ:

Թիֆլիզեցի հայքը միշտ սիրել են Ռուսթավելի գրածները, ուրեմն հույս ունիմ, թե չեմ սխալվում, որ թարգմանածս էլ բավական հավնեն»⁴:

«Վագրենավորի» առաջին հայերեն թարգմանությունն իր ժամանակին և հետագայում արժանացել է լայն հասարակության ուշադրությանը: 1888 թ. Ս. Բաստամյանի այդ թարգմանությունը «Կավկաս» ռուսերեն լրագրի հետագայ խմբագիրներից մեկը՝ Ն. Ս. Ստալինսկին տեղավորելով իր կազմած ժողովածուի մեջ⁵, նկատում է՝ «...«Ընծու Մորթի» պոեմը իր տաղանդավոր թարգմանիչն է գտել 60-ական թվականներին հանձին բժիշկ Բաստամյանի, որ Ռուսթավելու գրվածքը փոխագրել է հայերենի «Թիֆլիսի աշխարհաբար»-ով: Հանգուցյալ բժիշկը, որը ինչպես հայտնի է, շատ լուրջ ընդհանուր եվրոպական կրթություն էր ստացել, շատ մանրակրկիտ կերպով զբաղվել էր տեղական՝ Անդրկովկասյան բարբառների ուսումնասիրությամբ, որի հետևանքն է այս միանգամայն հաջող և էֆեկտավոր թարգմանությունը, որը գիտակ մարդկանց կարծիքով՝ շատ արժեքավոր էջ է մեր տեղական գրականության մեջ»⁶:

3 Տե՛ս «Կոունկ հայոց աշխարհին», 1860, № 6, 8, 9, 1862, № 2, 7, 11, Իհարկե սխալվում էր վրաց բանասեր՝ Զաքարիա Ճիճինաձեն (1854—1931), երբ 1913 թ. «Ռուսթավելի» ամսագրի № 2-ում «Վագրենավորը» այլևայլ լիզունելով՝ իր հոդվածում գրում էր՝ թե պոեմի «Հայերեն մի հատվածը չափածո թարգմանեց ղոկտոր Բաստամյանը և սույնց այն 1868 թ. հայկական «Կոունկ» ամսագրում»:

4 Տե՛ս «Կովկաս», 1847, № 20, «Մեղու Հայաստանի», 1861, № 44, 46 և այլն:

5 Տե՛ս «Կոունկ հայոց աշխարհին», 1860, № 6:

6 Տե՛ս Е. С. Сталinskiй, «Барсовая кожа» — грузинская поэма Шота Руставели на русском, французском, немецком, грузинском и армянском языках, Тифлис, 1888 г.

7 Տե՛ս Թիֆլիսի հայերեն «Պրոլետար» օրաթերթի 1937 թ. № 285, նոյաբրի (Հայկ Հովակիմյանի) հոդվածը:

Այդ թարգմանությունն արժանացել է նաև վրաց հասարակայնության ուշադրությանը: Նրա մասին իր ընթերցողներին ծանոթացրել է Իվ. Կերեսելի-ձեի (1829—1892) «Ցիսկարի» («Այգ») վրացական ամսագրի խմբագրությունը⁸:

Այնուհետև այդ թարգմանության մասին արտահայտվել է հայտնի վրաց պատմաբան Պլատոն Իոսելիանին (1809—1875)⁹:

1896 թվականին մանկավարժ, գրականագետ և թարգմանիչ Հարություն Միրիմանյան (1870—1956) առանձին գրքով լույս ընծայելով «Ընձենավորի» արձակ վերապատմած բովանդակությունը հայերեն, առաջաբանում Բաստամյանի թարգմանությունից երեք տուն օրինակ է բերել, որպես նմուշ «Վազրենավորի» առաջին հայերեն թարգմանության¹⁰:

«Վազրենավորի» առաջին հայերեն թարգմանությունը արժանացել է նաև հայ ուրիշ մտավորականների գնահատությանը: Հայտնի մանկավարժ և գրականագետ Ն. Հարոն (Նիկողայոս Տեր-Հարությունյանը՝ 1850—1920) խոսելով Ս. Բաստամյանի թարգմանության մասին, այն համարում է «բավականին հաջող»¹¹, իսկ հայ ժողովրդի մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը (1875—1957) հայ և վրաց ժողովուրդների փոխադարձ բարեկամության դրսևորումներից մեկը համարել է հենց «Վազրենավորի» այս թարգմանությունը և բարձր գնահատական է տվել նրան: «Հայ ընթերցող հասարակությունը, — գրել է Իսահակյանը, — միշտ էլ հետաքրքրված է եղել վրաց ժողովրդի գրականությամբ: Նա սիրով կարդացել է կլասիկների երկերը հայերեն թարգմանությամբ:

Դեռ 1860-ական թվականներին նա ճաշակել է աննման Շոթա Ռուսթավելիի «Վազրենավորից» ընդարձակ հատվածներ Թբիլիսիի հայոց բարբառով, որոնք մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց աշխուժությունը, գեղեցկությունը»¹²:

Այդ թարգմանությունը տպագրվելուց 50 տարի անց, Հովհաննես Թումանյանը (1869—1923) Բաստամյանի թարգմանության մի մեծ հատվածը վերածեց գրականի և դարձյալ առաջին թարգմանի՝ Սարգսի (Ստեփան Բաստամյանի) ստորագրությամբ ղեկավարելով «Լուսաբեր» դասագրքի 5-րդ մասում, միաժամանակ տեղավորելով Ռուսթավելու նկարը և համառոտ տեղեկություններ նրա մասին¹³: Հայտնի է, որ ինքը Հովհ. Թումանյանը ևս մեծ ցանկություն չունեի կատարելու «Վազրենավորի» ամբողջական թարգմանությունը¹⁴:

8 Տե՛ս «Ցիսկարի» («Այգ»), 1863, № 2, էջ 310—313:

9 Տե՛ս «Կավկազ» օրաթերթ, 1871, № 24:

10 Տե՛ս «Շոթա Ռուսթավելիի «Ընձենավորը» պոեմա, հեղինակի կենսագրությամբ և կարևոր տեղեկություններով: Համառոտեց՝ Հարություն Միրիմանյան», 1896, էջ 16:

11 Ն. Հարոն, Թուրքիկ հիշողություններ մեր թաղի անցյալ կյանքից, «Հովիտ» շաբաթաթերթ, 1914, № 24:

12 Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ (առաջաբան), Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 5: (Ընդգծումը մերն է):

13 Տե՛ս «Լուսաբեր», դասագիրք (կազմեցին՝ Հովհ. Թումանյան, Ստ. Լիսիցյան, Լևոն Շանթ), 1917, 5-րդ մաս, էջ 169—176:

14 Տե՛ս Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր 5, Պետհրատ, Երևան, 1945, էջ 336: Հետագայում «Վազրենավորի» նախերգանքի սբանչելի թարգմանությունը տվեց Վահան Տերյանը: «Վազրենավորի» որոշ հատվածների թարգմանություններ են կատարել նաև պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկր, Հովհաննես Կարապետյանը (Կարայանը), Վաղդան Սիմոնյանը (1891—

Ստ. Բաստամյանի թարգմանությունը նույնությամբ օգտագործվեց նաև մեր օրերում: 1937 թ. Շ. Ռուսթավելու 750-ամյա հոբելյանի օրերին՝ Թբիլիսիի հայկական «Պրոլետար» օրաթերթի մի շարք համարներում տպագրվեց Ս. Բաստամյանի համարյա ամբողջ թարգմանությունը¹⁵, իսկ նրա մի հատվածը՝ նաև Հայպետհրատի հրատարակած՝ «Շոթա Ռուսթավելին և նրա «Վազրենավորը» գրքում¹⁶:

Սակայն ո՞վ էր Բաստամյանը:

Ստեփան Եգորի Բաստամյանը (որին մեր բանասերներից շատերը սխալմամբ Սարգիս Բաստամյան են անվանում, ելնելով նրա «Սարգիս» ծածկանունից) ծնվել է 1815 թ. Թբիլիսում: Բարձրագույն բժշկական կոթողությունը ստանալով Ռուսաստանում, նա գործելու մեծ եռանդով վերագաղնում է ծնրեղավայր և անմիջապես լայն գրական, հասարակական և բժշկական աշխատանք ծավալում: Բժշկության հետ միաժամանակ նա աշխատակցում է նաև Հակոբ Կարինյանի (1813—1872) և Հակոբ Արղանյանի («—») խմբագրությանը: Լույս տեսնող «Կովկաս» հայերեն օրաթերթին, Մարկոս Աղաբեկյանի և Համբարձում էնֆիաճյանի «Կոունկ Հայոց աշխարհին», Ստեփաննոս ավ. ք. Մանգինյանի (1816—1876) «Մեղու Հայաստանիին» և այլ պարբերականներին:

Նա շատ շուտով ճանաչվում է որպես հմուտ բժիշկ, որպես լավ բանաստեղծ-գրականագետ և, որ գլխավորն է, աննման մարդ-քաղաքացի, որը գրավել է նույնիսկ օտարների ուշադրությունը: Ժամանակակիցների վկայությամբ և մեզ հասած տեղեկությունների համաձայն Բաստամյանը եղել է շատ կենսուրախ, սրամիտ և կատակասեր մարդ¹⁷:

Բացի գեղարվեստական գործերից, նա ուշագրավ բժշկական հոդվածներ է գետեղել մամուլում և մեծապես նպաստել հասարակության ինքնագիտակցության արթնացմանն ու զարգացմանը: Ստեփան Բաստամյանն ուներ «Կուլլեժսկի սովետնիկի» աստիճան¹⁸ և պարգևատրված էր 2-րդ աստիճանի «Ս. Ստանիսլավյան» շքանշանով¹⁹:

Հայ ընթերցողներին անհայտ չէր նաև Բաստամյանի կնոջ՝ Թբիլիսեցի հայտնի Միրզոյանների դուստր Աննայի հասարակական գործունեությունը: Նա այն առաջին հայ կանանցից էր, որը դեռևս անցյալ դարի 50-ական թվականներին հանդես էր գալիս մամուլում: Աննա Բաստամյանը դեռ օրիորդական տարիներին մի շարք ուշագրավ հոդվածներ է տպագրել Գաբրիել Պատկանյանի «Արարատում»:

Ստ. Բաստամյանը վախճանվեց 1872 թ. հուլիսի 10-ին (հ. տ.)²⁰:

1954), Անտոն Աուտրյանը (1897—1936), իսկ ամբողջական թարգմանությունը Գեորգ Մուրադյանը (1864—1939), ապա Գեորգ Ասատուրը (1863—1937), որի թարգմանությունը Հայպետհրատն առանձին գրքով լույս ընծայեց 1937 թ., «Academia»-յի հրատարակած «Վազրենավորի» առաջաբանի հետ միասին:

15 Տե՛ս «Պրոլետար», 1937, № 285, 292:

16 Տե՛ս «Շոթա Ռուսթավելին և նրա «Վազրենավորը» (կաղմկին և խմբագրեցին՝ Գ. Սևակ և Մ. Դուրգարյան), Պետհրատ, Երևան, 1938, էջ 22—23:

17 Տե՛ս ն. Հ ա ռ ո, Թուրքիկ հիշողություններ մեր թաղի անցյալ կյանքից, «Հովիտ» շաբաթթերթ, 1914, № 42:

18 «Վաճառական», 1867, № 12:

19 Նույն տեղում, № 2:

20 Տե՛ս «Кавказ» ուս. թերթը, 1872, № 80: